Մեր խմբաքանդակի կեդրոնն ել կազմում աթոռի վերա բազմած Ամենակալը (պատկ. 99), տարաբաղդաբար յերեսն ու կուրծքը փչացված բարբարոս ձեռքով. նկատվում է միայն բոլորակի մեջ խաչաձև լուսապսակը. աջ ձեռքի վեր բարձրացրած մասն ել նկատվում

Մարիամ բարեխոս. Սպիտ. Աստվածածին. Պատկեր 100.

և, վոր պետք է խաչակնքելիս լիներ, իսկ ձախում ավետարան, բայց ավելի հավանական է փաթուլթ բռնած։ Հիսուս հագել է մինչ վոտները հասնող տունիկա և մինչև ծնկները ծալված տոգա. յերկուսն ել նստած դիրքին համապատասխան ծալքերով. վոտներին փափուկ կոշիկ, ինչպես և Մարիամի քանդակի մեջ։ Աթոռն առանց թիկունքի յե, տախտաձև, չորս ցածր վոտների վրա հաստատված. գետնին կպած մասերը սրտաձև. աթոռի վրա դրված է յերկայնաձև բազմոց (մութաքա), վոր աթոռի ճակատի հետ զարդարված է յերկարագիծ հյուսկենով։ Պատկերի դաշտը զարդարված է արմավենիկի ցողուններով և տերևով, ԺԳ. դարում ընդհանրացած յեղանակով։ Ամբողջ պատկերն առնված է կեղծ կամարի տակ, վորի կողերն ու ճակատը նույնպես զարդարված են արմավենիկի ցողուններով և տերևներով։ Քառանկյունի քարի կամարից դուրս մնացած վերին անկյունները դարձյալ զարդարված են նույն մոտիվների տարբեր ձևակերպությամբ։

Պողոս առաքյալ, բարեխոսի քանդակի մեջ. Սպիտ. Աստվածածին. Պատկեր 101.

Ամենակալի աջ կողմից մի այլ քարի վրա Մարիամն և բարեխոս, կանգնած ամբողջ հասակով, ձեռքերն ուղղած դեպի Հիսուս, ձախն ավելի բարձր և առաջ մեկնած, քան աջը (պատկ. 100)։ Մինչև վոտները հասնող ներքնազգեստի վրայից ձգված և վերնազգեստը ծալքերով, գլխի լաչակը առանձին մինչև ուսերը, մի հանգամանք, վոր ոդիգիտրիայի բացառիկ որինակների մեջ և նկատվում և արևելյան հատկանիշ պիտի համարել։ Գլուխը համեմատաբար ավելի մեծ է և անհամաչափ ամբողջության, շուրջը լուսապսակով. դեմքը, հատկապես աջ կողմը, փոքր ինչ մաշված է և աչքը լավ չե նկատվում։ Վոտներին փափուկ կոշիկներ ունի առանց կրունկի։ Պատկերն առնված է զույգ կիսասյուների վրա բարձրացող կամարի տակ. կիսասյուների խարիսխները բոլորաձև են, ինչպես և խոյակները, վորոնք վերին մասում քառանկյունի բարձիկ ունին. կամարի ճակատն ու քարի դրսի անկյունները զարդարված են դարձյալ արմավենիկի զուգընթաց ցողունների հյուսվածքով և տերևով։

Ամենակալի ձախ կողմից ճիշտ նույն մեծությամբ և նույն տեսակ զարդարանքով կամարի տակ կանգնած